ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՓԱՐՊԻԻ ԾԻՐԱՆԱՎՈՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փարպի հնամենի գյուղի միջնադարյան հնագիտական զարդերից մեկը Ծիրանավոր եկեղեցին է: Հայ ճարտարապետության երախտավոր Թ. Թորամանյանն այն կոչում է ամրոց - եկեղեցի[1]: Ծիրանավորը հիմնադրվել է Ե. դարում եւ առանց լքվելու գործել մինչեւ ԺԵ.-ԺԷ. դդ.: Եկեղեցու՝ որձաքարի զանգվածներով կրկնակի պատերով զրահավորվելը եւ ամրոցի վերածվելը Թ. Թորամանյանը համարում է կապարված Ժ. դարում՝ ենթադրելով, որ Բյուրականի վրա արաբների հարձակումը եւ այդ շրջանում նրանց իրականացրած կոտորածները ստիպել են փարպեցիներին՝ աղոթատեղին իբրեւ բերդ ամրացնել, որպես վերջին ապաստարան[2]: Սակայն նորահայտ վիմագրերը, որ երեւացել են Ի. դ. երկրորդ կեսին, երբ հարավային պատից թափվել են եկեղեցին զրահապատող կոպտատաշ զորշավուն քարերը, վկայում են, որ աղոթարանն ամրոցի է վերածվել ավելի ուշ:

Ըստ Ս. Սաղումյանի՝ «Փարպիի 1191 թ. Զաքարյանների արձանագրությունից ու տեղադրությունից ենթադրելի է, որ բազիլիկան կրկնապատվել է այդ տարվա մոտերքում, իսկ Աշտարակի Ծիրանավորի արտոնագիրը հուշում է, որ կրկնապատը դրել են Զաքարյանները՝ սելջուկների դեմ պայքարի տարիներին՝ պաշտպանական նկատառումներով»[3]: Ս. Սաղումյանը միաժամանակ հերքում է կրկնապատերի շուրջ արտահայտված այն կարծիքները, թե դրանք իբր շարվել են եկեղեցու պատերն ամրացնելու նպատակով ԺԳ. դ. կամ ավելի վաղ եւ կամ ուշ միջնադարում՝ ԺԷ.-ԺԸ. դարերում[4]:

Ինչ վերաբերում է Աշտարակի Ծիրանավորի արտոնագրին, ապա նրա «*Ի ժամանակս Զաքարէի եւ Իւանէի, որոց Սարգսի, առին զԱշտարակս, յորում ամրացան...*»[5] հատվածից չի երեւում, թե խոսքը վկայակոչվող եկեղեցու մասին է, այլ՝ ամբողջ քաղաքի ընդհանրապես:

Չի բացառվում, որ Արագածոտնի վաղ միջնադարյան երեք բազիլիկ եկեղեցիների (Փարպիի, Աշտարակի, Աշնակի) կրկնապատերը կանգնեցնողները սելջուկները լինեն՝ ընդդեմ Զաքարյանների ազատագրական հաղթարշավի: Մեր

1 Տե՛ս **Թ. Թորամանյան,** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Երեւան, 1948, էջ 227:

2 Տե՛ս անդ:

3 **Ս. Սաղումյան,** Աշտարակ, Երեւան, 1998, էջ 107:

4 Տե՛ս անդ, էջ 107-108:

5 Անդ, էջ 143:

այս տեսակետը հիմնավորող փաստարկ է Մարմաշենի 1220-ական թվականների վերջերի ընդարձակ արձանագրության մի վկայություն: Այսպես, Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային պատի հիշատակագրում Շիրակի թեմակալ, Անիի եւ համայն Հայաստանի հոգեւոր առաջնորդ Գրիգոր արքեպ. Ապիրատյան - Պահլավունին հայտնում է, որ Մարմաշենը «...*աւերեալ էր յանաւրինաց եւ զվանքս գեղ արարեալ, զԿաթողիկէս բերդանման ամրացուցեալ*...»[6]:

Բացի այդ, անհնար է, որ Զաքարյան եղբայրները նախ հանդգնեին ձեւախեղել քրիստոնեական սրբարանը, երկրորդ, նրանք քաջ գիտակցել են արձանագրությունների կարեւորությունը գալիք սերունդների համար եւ Հայաստանի զանազան վայրերում բազմաթիվ հիշատակագրություններ են թողել իրենց փառահեղ հաղթանակների վերաբերյալ, ուստի, եթե իրենք կանգնեցրած լինեին կրկնապատերը, ապա ժամանակ կգտնեին նոր շարվածքի վրա արտագրել տալու նախնյաց՝ Բագրատունյաց շրջանի պատմական վկայագրերը:

Անկախ տեսակետներից, մի բան ակնհայտ է. Ծիրանավորների կրկնապատերը դրվել են 1045-1191 թթ. միջեւ ընկած ժամանակահատվածում, ինչպես հուշում են վիմագրերը:

Փարպիի Ծիրանավոր եկեղեցուց մեր կողմից ընդօրինակվել է ութ արձանագրություն[7], որից մինչ օրս հրատարակվել է միայն երկուսը (այն էլ առանց գրչագրերի ու լուսանկարների):

1. ԾԻՐԱՆԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ, արեւմտյան պատին, մուտքից վերեւ, 5 տող.

Ի ԹՈՒԻՍ :ՈԽ: (1191) ԵՍ ՋԱՔԱՐԻԱ ԱՄԻՐՍՊԱՀԱՍԱՐ ՀԱՈՑ ԵՒ ՎՐԱՑ/
ԱՒԳՆՈՒԹ ⌊ԵԱՄԲ⌋Ն ՔԻ ԱՌԻ ՋԱՇԽԱՐՀՍ Ի ՏԱՃԿԱՑ ԵՒ ԱՋԱՏ ԱՐԱՐԻ/
⌈ՓԱՐՊՈ ԻՐԻՑԱՆԻՍ ՅԱՄԵՆԱՅՆ ՀԱՐԿԷ: ՈՎ ԽԱՓԱՆԷ ՅԺԸ (318)- ⌈ԻՑՆ
Ն⌉ ՋՈՎԵ ⌊Ա⌋Լ ԵՂԻՑԻ: Ի ԹՎԻՆ Կ⌈ԱՏԱՐԵՆ ՎԱՄՆ Շ⌉ԱՀԱՆՇԱՀ⌊Ի⌋ ՈՐԴ/ ⌈Ո
ՋԱՔԱՐԻԱ⌉Ի :Գ: (3) ԱՒՐ ԵՒ Մ⌈ԵՋ⌉ Կ⌈ԱՏԱՐԵՆ⌉ ԱՆԽԱՓԱՆ ⌈ՄԻ⌉ԼՀ
Ի ԳԱԼՈՒՍՏ ՔԻ:Դ: (4) ԱՒՐ ՊԱՏԱ⌈Ր⌉ԱԳ / ԼԻՆԻ ՋԱՔ⌈ԱՐԻԱՒ⌉[8]:

6 **И.О. Орбели**, Избранные труды, Ереван, 1963, p. 443: Հմմտ.՝ **Ն. Եղիազարյան,** Մարմաշենի վանքը եւ նրա վիմագրությունները. «Էջմիածին», 1957, Ե., էջ 42-43:

7 Գրչագրերը՝ գեղանկարիչ **Գեորգ Համբարձումյանի**:

8 Հայերը, հատկապես հյուսիսային Հայաստանում, հիշյալ ժամանակներից մի տեւական շրջան, հարեւան

Հրատ. Մխիթար վարդապետ Տէր-Մկրտչեան, Իմ գործակալութեան ժամանակ հաւաքած մի քանի արձանագրութիւններ. «Բանասէր», Փարիզ, 1903,էջ 30, «Վիմական տարեգիր», ցուցակ Ժողովածոյ արձանագրութեանց հայոց, կազմեաց **Կ. Կոստանեանց**, Ս Պետերբուրգ, 1913, էջ 53, **Ե. Տեր- Մինասյան**, Ամբերդաձորի հնությունները եւ արձանագրությունները. «Էջմիածին», 1961, Ե., էջ 55, **Ս. Ավագյան**, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երեւան, 1977, էջ 108 (հատված):

Լուսանկ. 1

Ծանոթ. Մխիթար վ. Տեր-Մկրտչեանն արձանագրության թվականն ընթերցել է սխալ՝ ՈԿ. (1211), ինչը նույն ձեւով զետեղվել է Վիմական տարեգրում: Բայց Մխիթար վարդապետը կատարել է այն ուշագրավ դիտարկումը, որ Ծիրանավոր եկեղեցին ունի զետնափոր հաղորդակցություն ձորի հետ:

Արձանագրության թվականն ուղղել է Ե. Տէր-Մինասյանը՝ ՈԽ.(1191): Այս արձանագրության կապակցությամբ Տ. Պետրոսյանցը նշում է, որ հայ-վրացական զորքերի արշավանքն Արարատյան դաշտ 1191 թ. ունեցել է հետախուզական բնույթ, եւ չնայած շահած ճակատամարտին, Զաքարեն ստիպված է եղել հեռանալ գրավված հողերից, կամ, ինչպես վրաց ժամանակագիրն է գրում, հաղթական եւ մեծ ավարով լի վերադառնալ Վրաստան: Սրա պատճառն այն էր, որ Զաքարեն թեեւ շահել էր ճակատամարտը, գրավել Արարատյան դաշտը, բայց չէր տիրացել Ամբերդ անառիկ ամրոցին ու չէր կարող ազատագրված հողերը պահել՝ թիկունքում ունենալով թշնամու այդքան հզոր ուժ[9]:

Զաքարեն եւ Իվանեն, ըստ Վարդան Արեւելցու, 1191 թ. գրավել էին Ծիրակը[10], որտեղից երեւի շարժվել են դեպի հարեւան գավառ, ազատագրել Փարպին ու Աշտարակը, այսինքն՝ նախապես տիրացել Արագածոտնի դաշտային մասերին, ամրացել այնտեղ՝ դրանով իսկ շրջափակելով եւ դրսից օգնության հնարավորությունից զրկելով առանցքային Ամբերդ ամրոցը: Եւ միայն հինգ տարի հետո՝ 1196 թ., ինչպես Վարդան Արեւելցին է հայտնում[11], Զաքարյան եղբայրները կարողացել են վերցնել այդ անառիկ ամրոցը:

Արձանագրության երրորդ տողի եղծված սկզբնամասի վերականգնումը կատարել է Ս. Ավագյանը՝ «*Փարպո իրիցանիս*», որի ներքո հասկացվում են գյուղի քահանաները, որ ազատվել են ամեն տեսակի հարկերից:

Փարպիում ապահարկության ձեռնարկը լիովին բնորոշ էր Զաքարյան եղբայրներին, որոնք սելջուկ-թուրքերից ազատագրելով հայկական տարածքները, ամենուրեք բնակիչներին ազատում էին հարկերից՝ հնարավորություն տալով տնտեսության վերականգնման ու զարգացման համար:

հզոր Վրաստանի ուղղափառ եկեղեցու ազդեցությամբ Ս. Պատարագ են մատուցել նաեւ ողջերի համար, ինչը, չնայած արեւելյան վարդապետների հզոր ընդդիմության, հայոց մեծամեծները փորձել են վավերացնել Սսի Ա.(1204 թ.), Լոռեի (1205 թ.) եւ Անիի (1207 թ.) եկեղեցական ժողովներով:

9 Տես **Տ.Պետրոսյանց**, Վաչուտյաններ, Երեւան, 2001, էջ 14-15:

10 Տես «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 138:

11 Տես անդ:

Այս արձանագրությունը եւս մեկ անգամ փաստում է, որ Զաքարեն ոչ թե 1192 թ. է ստանձնել հայոց եւ վրաց ամիրսպասալարի պաշտոնը, ինչպես ընդունված է կարծել[12], այլ ավելի վաղ: Դեռեւս Հռոմայրի 1187 թ. արձանագրությունում Զաքարեն հիշատակվում է ամիրսպասալար[13], բայց առանց «հայոց եւ վրաց» արտահայտության: Այդ կապակցությամբ Գ. Հովսեփյանը կարծում է, թե Զաքարեն ամիրսպասալար նախապես եղել է միայն հայ զորքի համար[14]:

Զարմանալի է, որ Ե. Տեր-Մինասյանը, ընթերցելով վեցերորդ տողի վերջի ...ԱՀԻՆՇԱՀ ՈՐԴ... տառաշարքը, այն չի վերականգնել: Մենք վստահաբար վերծանել ենք. ⌜Շ⌝ԱՀԱՆՇԱՀ⌞Ի⌟ ՈՐԴ / ⌜Ո ԶԱՔԱՐԻԱ⌝Ի. յոթերորդ տողի սկզբնամասում նշմարվում են ԶԱՔԱՐԻԱ անվան տառահետքերը[15]:

Մեր համարձակությանը կռվան է ծառայել Գարեգին Հովսեփյանի հետեւյալ դիտարկումը. «*Վարդան պատմիչ յիշում է, թէ Զաքարիայի որդին Շահընշահ իւր անունն ստացել է «ի պատիւ տէրութեանն Անւոյ», գուցէ եւ Շիրակի գրաման առթիւ* (1191 թ. ըստ Վարդան Արեւելցու.- Ա.Մ.), *երբ մօտաւորապէս պէտք է ծնուած լինի նա. նորա իսկական անունը Սարգիս է*»[16]:

2. **ԾԻՐԱՆԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ**, հվ. պատին արտաքուստ, շրջանակված հավասարաթեւ խաչաքանդակի վերեւում 3 տող.



12 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երեւան, 1976, էջ 531:

13 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պր. IX, Լոռու մարզ, կազմեցին **Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան**, Երեւան, 2012, էջ 298:

14 Տե՛ս **Գարեգին Կաթողիկոս Յովսէփեան,** Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 4:

15 Վերականգնման ժամանակ հաշվի ենք առել բնագրի գրչական եւ վիմագրական մի շարք առանձնահատկություններ, մասնավորապես, սեռ. հոլովի «Ո» վերջավորությունից հետո «Ց» տառ չավելացնելը եւ ՇԱՀԱՆՇԱՀ անվան վերջում «Ա»-ի կամ «ԱՑ»-ի փոխարեն «Ի» գրելը:

16 **Գ. Յովսէփեան,** նշվ. աշխ., էջ 6-7:

+ Ի Ն ԵՒ ԾԷ (1008) ԹՎԱԿԱՆԻՆ ԵՍ ՄԱՒՇԵ ԳԱԳԿԱ /
ՀՐԱՄԱՆՈՎ ԹՈՂԻ ՁԿՈՐԵԿԻ ՇԱՐԵԱՏՍ, ԵՒ ՏԱՅ
ՀԱՅՐ/ :Բ: (2) ԽԱԼ ԲԱՄԲԱԿԻ :Ժ: (10):

Լուսանկ. 2

Ծանոթ. Այս եւ հաջորդ մի քանի արձանագրությունները ի հայտ են եկել անցյալ դարի երկրորդ կեսին, երբ բացվել է եկեղեցու բուն հարավային պատը:

Արձանագրությունն իրավական բնույթի է. 1008 թ. Մոշե անունով պաշտոնյան Գագիկ Ա. Շահանշահ Բագրատունու (990-1020) հրամանով վերացնում է Փարպիի արտերի կորեկից գանձվող շարիաթը՝ տասանորդը[17]: Նաեւ պատվիրում է, որ վանահայրը տա Բ. (2) խալ բամբակի դիմաց Ժ. (10)[18]: Արտոնագրի այս երկրորդ մասը ձեւակերպված է հակիրճ: Չի նշված, թե բամբակի դիմաց ինչ տան՝ դրա՞մ (դահեկան), թե՞...: Բարեբախտաբար, այս արձանագրությանը ժամանակակից Ամբերդի 1026 թ.՝ Վահրամ Պահլավունու վիմագրից իմանում ենք, որ միջնադարում բամբակը հարկվել է բնամթերքով՝ լիտրով[19]: Վերջինս հնում հանդես է եկել որպես ծանրության, կշռի միավոր: Ըստ Հ. Մանանդյանի, 1 լիտրը հավասար է եղել 326.4 գրամի[20]: Իսկ Ռ. Վարդանյանի պրպտումների համաձայն՝ 1 լիտրը կշռել է 320.4 գրամ[21]: Հետեւապես, մեր արձանագրության պարագայում երկու խալ բամբակից հարկվել է՝ 10 x 320.4 (326.4) = 3 կգ 204 (264) գրամ:

Իսկ ինչ է խալը: Այդ բառը ծագում է արաբերեն خلاء«խալա» ձեւից, որ նշանակում է դատարկություն, դատարկ տարածություն, խորշ, այսինքն՝«խալը» չափի, տարողության տեսակի անվանում է, որտեղ, երեւի, հավաքվել, պահվել է բամբակը:

Այսպիսով, Մոշեի արտոնագրի երկրորդ մասից պետք է հասկանանք, որ 10 լիտր բամբակն այսուհետեւ հարկվելու է ոչ թե մեկ, այլ՝ երկու խալից (խորշից):

Ստացվում է, որ բամբակի հարկը 50%-ով զեղչվել է:

3. ԾԻՐԱՆԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ, հվ. պատին, նախորդից ներքեւ, նույն շրջանակված հավասարաթեւ խաչքանդակի դիմահայաց ձախ կողմում, 6 տող.

17 Շարիաթը ծագում է արաբերեն عشرة (աշարաթ) «տասը» բառից եւ նշանակում է «տասանորդ» (1/10 մաս):

18 Բնագրում «Ժ»-ն փորագրված է «Թ»-ի նման:

19 Տե՛ս **Ս. Ավագյան,** Վիմական արձանագրությունների բառաքննություն, էջ 17, 335:

20 Տե՛ս **Հ. Մանանդյան,** Կշիռները եւ չափերը հնագույն հայ աղբյուրներում, Երեւան, 1930, էջ 129:

21 Տե՛ս **Ռ. Վարդանյան,** Հայաստանի չափերն ու կշիռները, Երեւան, 1989, էջ 137:

Աշոտ Գ. թագավորի արձանագրությունը

Աննաս վանականի արձանագրությունը

Ծիրանավորի հյուսիսային պատի 1001 թ. եղծված արձանագրությունը

Զաքարե ամիրսպասալարի 1191 թ. արձանագրությունը

Մոշե գործակալի 1008 թ. արձանագրությունը

Վաչե գործակալի արձանագրությունը

+ Ի ԹԱԳԱՎՈՐՈՒ/ԹԵԱՆ ԳԱԳԿԱ Ի ՌԱՍՄ
ԴՐԱՎ. ՏԱ :Ճ: (100) ՀԱՐԿԻ ԴՐԱ/Մ Ի:Մ: (200):
ՈՐ ⌈Ա⌉ԻԵԼԻ ԱՌՈՒ / Ց (300) ԵՒ ⌈ԺԸ (18) ԻՑՆ ՆՉՈՎԱԾ⌉ Է:

Լուսանկ. 3

Ծանոթ. Արձանագրությունը թեև թվական չունի, բայց թվագրվում է հիշատակվող, կարծում ենք, նույն Գագիկ Ա. Շահանշահի գահակալության ժամանակով՝ 990-1020 թթ.:

Սա ևս իրավական բնույթի արձանագրություն է. կատարվել է պետական փուրքի չափի վերանայում:

Բնագրի երրորդ տողում օգտագործվել է արաբերեն رسم « ռ ա ս ս մ » բազմանշանակ բառը, որը չորրորդ իմաստով նշանակում է «փուրք»: Քանի որ արաբերենում «պաշտոնական» բառը ծագում է նույն «ռասմ» արմատից, ապա Փարպիի այս արձանագրության «ռասմ»-ը պետք է հասկանալ որպես «պետական փուրք»: «*Ռասմ կամ ռուսումաթ (կարգ,* رسميات *սովորույթ*), (-պաշտոնական բնույթ կրող ամեն ինչ - Ա.Մ.) *էին կոչվում այն փուրքերը, որ գանձվում էին որպես հավելյալ ոճիկ պետական բարձրաստիճան եւ կրտսեր պաշտոնյաների օգտին: Դրանցից էին սաղրի, վեզիրի, դարուղայի (ոստիկանապետ), ֆինանսական եւ հարկային պաշտոնյաների օգտին գանձվող ռասերը*»[22]:

Փարպիի այս վիմագրի ամբողջ միտքն այն է, որ պետական փուրքի դիմաց մուծվելու է 100 հարկադրամ՝ նախկին 200-ի փոխարեն: Այս, ինչպես նախորդ արձանագրության դեպքում, նույնպես հարկը զեղչվել է 50%-ով:

4. **ԾԻՐԱՆԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ**, հվ. պատին, նույն շրջանակված հավասարաթեւ խաչաքանդակի աջ կողքին, 6 տող.

22 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Երեւան, 1972, էջ 75:

+Ի ԹԱԳԱՎՈ / ՐՈՒԹԵ⌊Ա⌋Ն Ա/ՇՈՏՈ
ԱՋԱՏ Է ԼԵՌՆԱԲԱԺ / Ն, ՈՐ ԱՌՈՒՆ,
ՅԺԸ (318) ԷՅՆ ՆՋՈՎ⌊ԵԱԼ⌋ ԵՂԻՅԻ⌊Ն⌋:

Լուսանկ. 4

Ծանոթ. Նույնպես իրավական բնույթի արձանագրություն է: Արփոնագրում հիշատակվող թագավորը, հարկ է ենթադրել, Աշոտ Գ. Ողորմածն է (953-997 թթ.): Արձանագրությունից պետք է հասկանալ, որ Փարպի գյուղն ազատվել է լեռնաբաժից: *«Դեռևս Սասանյանների օրոք արհեստական արտադրանքից և առևտրից գանձվում էր բաժ կոչվող հարկը... Բայց բաժը նաև առևտրական անցահարկ էր և իբրև այդպիսին քանիցս հիշատակված է X-XI դարերի վիմագիր արձանագրություններում: Բաժ գանձվում էր ճանապարհների, կամուրջների վրա, քաղաքի դռների առջև, այս դեպքում այն կոչվում էր դռնագիր: Աղբյուրների վկայությամբ բաժը գանձվում էր ինչպես սայլով, գրաստով, նույնպես և շալակով քաղաք տարվող մթերքներից և վաճառվելիք կամ մորթվելիք անասուններից: Բաժ- անցահարկ էին նաև ապուռիշին՝ իշաբեռից գանձվող բաժ, ծուծը, մրուրը և կապճիքը, որոնք թերևս վաճառքի համար սայլով, գրաստով և շալակով քաղաք տարվող մթերքներից գանձվող կամ անցահարկերի անուններ են»*[23]:

Մեր արձանագրության պարագային լեռնաբաժ պետք է հասկանալ լեռով, լեռնային ճանապարհով ապրանքներ տեղափոխելու համար վճարվող անցահարկ:

5. **ԾԻՐԱՆԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ**, նախորդից անմիջապես ներքև, խիստ եղծված, 7 տող



⌈Ի Թ⌉ԱԳԱՎՈ / ⌈ՐՈՒԹ⌉Ե⌊Ա⌋Ն Տ/⌈ԵԱՌՆ ԳԱ⌉ԳԿԱ,
ԵՄ՝ ՎԱՋԷ /, ԹՈՂԻ ՋԿՈՐԵԿԻ / ⌈ԵԻ⌉ ԳԱ⌈ՐՈՒ Շ⌉ԱՐԵԱՏՆ/
⌈ԵԻ ՋԿ⌉Ա ՊՃ⌈ԱՅՆ ՓԱՅՆ⌉ ԵՐ :Ժ: (10) ԸՆՋՈ⌈Ց⌉ ...

Լուսանկ. 5

Ծանոթ. Համարյա ամբողջությամբ քայքայված արձանագրությունը վերականգնել ենք յուրաքանչյուր տողում պահպանված տառերի և հազիվ նշմարելի

23 «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 262-263:

բառերի շնորհիվ: Արձանագրությունը նախորդների նման իրավաբանական վավերագիր է՝ ապահարկությունների ակտով. Վաչէ անունով գործակալը ապահարկել է կորեկից, զարուց զանձվող շարիաթը (տասանորդը), ցորենի դեզերից (ի կապճացն) հարկվող մասը, նաեւ տասն այլ ունեցվածքների դիմաց վճարվող տուրքերը:

⌈ԶԿԱՊՃԱՅՆ ՓԱՅՆ⌉ վերականգնել ենք համաձայն Ս. Քրիստափոր եկեղեցու 950 թ. արձանագրության[24]: Ըստ տեղում այդ վիմագրի մեր ընթերցման, ապահարկվել է «*ի կապճացն*» քառորդ մասը: «Կապիճ» նշանակում է «*խոտի, ցորենի դէզ, բարդոց*»[25]:

Ինչ վերաբերում է Փարպիի կորեկի տասանորդի վերացմանը, ապա, ըստ էության, այդ ապահարկությունը կրկնվել է, քանի որ նույնն արվել է դեռեւս տեղի 1008 թ. վիմական վավերագրով: Մնում է ենթադրել, որ Վաչէի վճռով շեշտվել է կորեկի ապահարկության փաստը մյուս հարկերի վերացման համատեքստում:

6. **ԾԻՐԱՆԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ**, նախորդից ցած, բարավորի պռնկին, մեծադիր բոլորաձեւ երկաթագրով, մեկ տող.

Տ[Ի]Ր ԱՆՆԱՍ ՎԱՆԱԳԱՆ
Հրապ. Ս.Սաղումյան,
Աշխարակ, 142:

Ծանոթ. Վիմագրագետ Ս.Սաղումյանը չի բացառում, որ Փարպիի Ծիրանավորի հարավային պատի, ինչպես ինքն է ասում, «*Նորաբաց ամենահմուտ գրչի նախանձը շարժող գեղագիր ... այդ հիշատակագրությունը*»[26], էլի մի քանիսի հետ միասին, գրված լինի դեռեւս Մեսրոպ Մաշտոցի կենդանության օրոք[27]. (պետք է նկատի ունենալ՝ 405-440 թթ. - Ա.Մ.):

Սակայն հարկ է ուշադրություն դարձնել այն կարեւորագույն փաստին, որ ԱՆՆԱՍ ՎԱՆԱԳԱՆԻ հիշատակագրության «Ա» տառերը չեն համապատասխանում Ե. դարի յուրահատուկ գրելաձեւին, ինչն ավելի քան 40 անգամ փորագրված է Տեկորի տաճարի 480-ական թթ. շինարարական վկայագրում[28]: Հետեւապես, տէր Աննաս վանականի հիշատակագրությունը պետք է թվագրել գոնե Զ. դարով:

24 Տե՛ս **Հ. Ս. Եղիազարյան,** Ներքին Թալին գյուղի Ս. Քրիստափորի անվան վանքը, նրա վիմագիր արձանագրությունները եւ գյուղի մյուս հուշարձանները. «Էջմիածին», 1971, Ը., էջ 63:

25 Տե՛ս «Հայերէն բացատրական բառարան», կազմեց Սրբ. Մալխասեանց, հ. II, Երեւան, 1944, էջ 331:

26 **Ս. Սաղումյան,** Աշխարակ, 142:

27 Անդ:

28 Տե՛ս գրչագիրը՝ **Կ. Ղաֆադարյան,** Էջեր հայոց միջնադարյան մշակույթի եւ պատմության, Երեւան, 2007 էջ 108:

7. **ԾԻՐԱՆԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ**, հյուսիսային բուն պատի արեւելյան եզրին, արտաքուստ, բարձր, 9 տող (ամբողջովին քայքայված, նշմարվում են առանձին տառահետքեր).



... ԵՂԵ ՄԵՂ ⌜ԱԻ⌝ ՈՐ ՄԵՐ / ԵՐԿ ⌜ՐԻ⌝ Ս Ե... ԵՆ
ԴԵՄ ԵՒ ՄԵՐ / ⌜ՀԱՅ⌝ ՐԵՆԻՆ ԵՍ ՀԱՋԱՐԱՊԵՏ
Ն ⌜ԻԿՈ⌝ ՂԻԿ, ՈՐ ԵՂԻ.. ՈՂ/⌜ ՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ **ԱՅ**⌝.. ՈՐ
ՄԵԾ .. ՈՐՄԻՍ ՀԱՍ ⌜ՏԱ⌝Տ, ՈՐ Մ ⌜Ե⌝Ջ ՅԻԾԱՏ/⌜ԱԿ⌝
... ԵՏՈՒ... ԱՅ ⌜Մ⌝ ... ՄԵՐ/ ... ԿՏԱԿՍ. ⌜ՈՔ ՈՐ⌝
ՋԳՐԵԱԼՍ ԽԱՓԱՆԵՆ, ՆՋ / ⌜ՈՎԱԾ ԵՆ
ՅԺԸ (318) ՀԱՅՐԱ⌝ՊԵՏ ⌜ԱՅՆ⌝ ԵՒ ԽԱՉԱՀԱՆՈՒԱԾՆ ԵՒ
Ջ/ ⌜ԿԱՅԵՆԻՆ ՄԱՄՆԱԿԻՅ⌝ / ...
ԹՈՂԱՒ... / ⌜Ն ԵՒ⌝ Ծ (1001) ԹՈՒԻՆ:

Լուսանկ. 6

Ծանոթ. Այս խիստ եղծված, անընթեռնելի արձանագրության գոյության մասին ակնարկել է Ե. Տեր-Մինասյանը[29]:

Արձանագրության ընթեռնելի մասերից այն է հասկացվում, որ Նիկողիկ հազարապետը՝ երկրի հարկային վերակացուն (Թալինի նորահայտ վիմագրից հետո հազարապետ գործակալ կենտրոնական Հայաստանում Բագրատունիների օրոք հիշատակվում է այստեղ), Փարպիի Ծիրանավոր եկեղեցուն նվիրատվություն է կատարել եւ խստորեն վավերացրել, որպեսզի վճռի խախտում չարվի:

8. **ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԵԿՈՐ ԾԻՐԱՆԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ** բակում, 5 տող.

29 Տես **Ե. Տեր-Մինասյան**, Ամբերդաձորի հնությունները եւ արձանագրությունները, էջ 55:

Ի Տ⌈Է⌉Ր⌈ՈՒԹԵԱՆ⌉ / ՊԱՐ⌈ՈՆ
ԱՂԲՈՒՂԱՅԻ⌉ / Խ⌈ՈՆԱՐԿԻ⌉/, ՆԱ...

Ծանոթ. Վերծանությունը պայմանական է, որի համար որպես հիմք ընդունել ենք Փարպիի Ս. Գրիգոր եկեղեցու բարավորի 1304 թ. արձանագրությունը, որտեղ պատմական այդ գյուղի ավատատեր հանդես է գալիս Աղբուղա Զաքարյանը[30]:

Ահա սրանք են Փարպիի Ծիրանավորի մեր կողմից ընդօրինակված վիմագրերը, որոնք կարևոր սկզբնաղբյուրներ են միջնադարյան Հայաստանի քաղաքական, ռազմական, տնտեսական, իրավունքի պատմության ուսումնասիրության համար:

30 Տե՛ս անդ: